



Հ. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

# ԸՆԹԵՐՑԱՐԱՆ ԱՌԱՋԻՆ ԴԱՍԱՐԱՆԻ ՀԱՄԱՐ



ԳԵՂԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ  
ԵԵԲՆԱԳԱՐ

1939



31 JAN 2018 91


Հ. ՀԱՅՐԱՊԵՏՈՆ

# ԸՆԹԵՐՑԱՐԱՆ ԱՌԱՋԻՆ ԴԱՍԱՐԱՆԻ ՀԱՄԱՐ

ՅԵՐԿՐՈՐԴ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅՈՏՎՎԱԾՔ Ե  
ՀԱՅԿԱԿԱՆ ԽՍՀ ԼՈՒԺՔԱՆԴԿՈՒՄՈՏԻ ԿՈՂՄԻՑ

ՀԱՅԱԿԱՆ  
ԽՍՀ



ԳԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ  
ԵՎՐԵՎԱՆ

1939



## 1. ԿԱՐԴԱՌ

Կարդա, այ իմ խելոք մանուկ,  
Կարդա, գրիր տարին ըոլոր,  
Կարդացողի խելքն ե կտրուկ,  
Միտքը պայծառ ու լուսավոր:

Գիրք կարդալով դու գրքերում  
Շատ նորանոր բան կիմանաս,  
Շատ շատերից շատ բաներում  
Մտքով հեռու կոլանաս:

Դու կիմանաս՝ ինչու մարդիկ  
Պետք ե ապրեն իրար համար,  
Ինչն ե մարդկանց ցամս ու կարիք,  
Ինչ ե լույսը, ինչը՝ խավար:

Ա. ԱՅՐԱՊԵՏԻՆ  
Первая книга для чтения  
после букваря  
Гиз Арм ССР, Ереван, 1939 г.



11-287019N

## 2. ԴԺՎԱՐ ՀԱՆԵԼՈՒԿ

Պուղին թաշկինակով տասը ձու յեր տանում տուն:  
Ճամփին պատահեց իր ծանոթին և ասաց.

— Թէ իմանաս թաշկինակումս ինչ կա, որա ձիա-  
ծեղից քեզ ել կուտացնեմ:

— Չու, — պատասխանեց ծանոթը:

— Վահ, եղ վոնց իմացար, — զարմացավ իւելոքը: —  
Դե են ել տաս՝ քանչ հատ ե, բոլոր տասն ել քեզ կտամ:

— Տասը, — պատասխանեց ծանոթը:

— Առ, ախողեր, եղ ել իմացար, — ասաց Պուղին ու  
թաշկինակով ձուն տվեց ծանոթին:



## 3. ԳԻՒՔ

Ասա տեսնեմ,  
Իմ սիրուն գիրք,  
Քեզ կսիրեմ,  
Քան խաղ ու միրգ,  
Ես ինչե՞ր կան  
Ծոցիդ մեջ,  
Ճատան մկնիկ,  
Վոսկի ձկնիկ,  
Թիթեռ, բզեզ՝  
Ի՞սկ ծաղկի պես,  
Բադ ու պուլիկ,

Գառն ու ուլիկ,  
Կաքավ ու լոր,  
Շլոր, սայոր...  
Ասա, պատմիք  
Իմ ականջին,  
Դու ծանոթ ես  
Ամեն ինչին:  
Դե, շուտ պատմի՛,  
Իմ խելոք գիրք,  
Քեզ կսիրեմ,  
Քան խաղ ու միրգ:

## 4. ԾԱՂԻԿՆԵՐԸ

— Ո՞ւր գնացին ծաղիկները:  
— Սուս քնած են հողի տակ,  
Ցաք ծածկված վողջ ձմեռը  
Զյուն ծածկոցով սպիտակ:

## 5. ԶՄԵՌ


Ձմեռ եւ Զյունը ծածկել ե դաշտ ու այգի, սար ու  
ձոր: Գետն ու առուն լոել են:

Զիերը, կովերը, վոչխարներն ապրում են տաք գոմե՛  
րում: Վայրի կենդանիները տաք մուշտակներ են հազեր:  
Կողանտեսականները ձմռան համար ունեն ջվալներով  
ալյուր ու ձագար, կախաններով խաղող, տանձ ու խնձորը,  
կողովներով ձու:

Յերեխանները ձյունից ու յրտից չեն վախենում:  
Նրանք սահում են, սղում, ճնագնդի յեն խաղում, ճնե-  
մարդ շինում:

## ՀԱՆԵԼՈՒԿ

Պատը շինեց  
Մի կամուրջ,  
Վոչ մեխ ուներ,  
Վոչ ել մուրճ:




## 6. ՀԱՎԱ ՍՈՎՈՐԵՆՔ

Այսքան ուրախ կյանքը մեր  
Ըսկեր Ստալինն ե ավել,  
Յեզ հայրական խնամքով  
Մեղ փայտայել ամեն որ:

Դրա համար յեկեք մենք  
Միշտ գերազանց սովորենք,  
Կնենք խելոք, կարգապահ  
Յեզ չունենանք բացակա,

Վոր համբավը մեր լոի  
Ըսկեր Ստալինն ու ասի.  
«Ապրեք, խելոք մանուկներ,  
Այդ ինչ լավ եք սովորել»:



## 7. ՁՐԱՆ ՅԵՒԳ


Ծեռեց անսեք,  
Ճշուակ է կալիս  
Փաթիլ-փաթիլ  
Սպիտակ,  
Ծառ ու ծաղիկ  
Փողոց ու տուն  
Վողջ առել ե  
Իրա տակ:

Զան, ջան ձմեռ,  
Հազար բարեվ,  
Ի՞նչ ուրախ ենք  
Մենք այսոր.  
Չնե տներ  
Յեզ ձնե մարդ  
Մենք կշենենք  
Ամեն որ:

---

Զմուճն ամիսներն են.  
Գեկտեմբեր, հունվար, փետրվար:

Ինչուր  
 Ինչուր զամ, նայում  
 Անձնամ, ինչ է օգանց  
 Այս գրութիւն  
 Բոշուր զբար հետո-  
 վան ու սպաս  
 Ինչ ի՞նը քանի Ե գրու  
 Կորուր: Ժամ դուն Ա  
 Անձնամում, հայում  
 Ե զբարնու ու զամ երկու  
 Այս նախականում:



### 8. Ո՞Վ Ե ՄԵՂԱՎՈՐԸ

Սարդը կախ եք արել իր բարտկ  
 թելը ծառի ճյուղից և իջել բակը:  
 Ճուտիկը, Մուտիկը և Ճխտու-  
 րիկը, Զալ հավիկի զիժ վառեկները  
 սարդին տեսան:

- Ի՞նն ե, — ճվաց Ճուտիկը:
- Զե, իմն ե, — ճչաց Մուտիկը:
- Զե, իմն ե, իմը, — ճկճկաց  
Ճխտուրիկը:
- Ցեվ յերեքն ել վագեցին, վոր  
սարդին բռնեն և ուտեն:
- Իրար այսքան հրեցին, վոր սար-  
դըն ել շապասեց ու իր թելովը վեր  
վախտավ:
- Հիմա այս ինչ արիք, — ճչում  
եք Ճուտիկը:
- Դուք վախեցրիք, — ճվում եք  
Մուտիկը:
- Իմ սարդն ինչնու վախցրիք, — լաց եք վմնում Ճխու-  
տուրիկը:



## 9. ՄԱՅԻՍԻ ՈՒԹՈՒՄ

Սպիտակ, փափուկ ձյուն ե յեկեր  
Պատել փողոց ու դաշտեր:  
Յեկեք, յեկեք, ջան մանուկներ,  
Խաղանք ձմռան մեր խաղեր:  
  
Ողը մաքուր, սառն ու պայծառ,  
Յեկեք վազենք ու խաղանք,  
Վաղուց ե, վոր մենք չենք տեսել  
Այսպես սիրուն յեղանակ:  
  
Խաղ անելով մաքուր ողում,  
Ուժ, յեռանդ ենք հավաքում,  
Խորհուրդների Յերկրի համար  
Աշխատանքի պատրաստվում:

## ՀԱՆԵԼՈՒԿ

Մեծ սականն սպիտակ  
Աշխարհն առավ իրա տակ:

## 10. ՄԱՅԻՍ

Մայրիկը սալոր եր գնել, վոր ճաշից հետո բաժանի  
յերեխաններին:

Սալորն ափսեյով դրված եր սեղանի վրա: Վանյան  
յերբ սենյակը մտավ և սալորը տեսավ, ուզնց աւտեր:

Տեսնելով, վոր վոչ վոք չկա, նա մի սալոր վերցրեց  
ու կերավ:

Ճաշից առաջ մայրիկը սալորը համրեց ու տեսավ,  
վոր մեկը պակաս եւ Այդ մասին նա հայտնեց Վանյայի  
հայրիկին:

Հայրիկը ճաշի ժամանակ հարցրեց.

— Յերեխաններ, ձեզանից ավ ե մի սալոր կերել?  
Բոլորն ել պատասխաննեցին.

— Զենք կերել:

Վանյան ել ասաց.

— Զեմ կերել:

— Ով վոր կերել ե, վատ ե արեր Բայց այդ վոչինչ  
Յեթե ուտողը կորիզը կուլ ե տիֆեր, մէ պահց հետո կմեռնի  
Վանյան գունտառվեց ու պատասխաննեց.

— Վահ, հայրիկ, կորիզը պատուհանից գուշակ դցեցի  
Բոլորը ծիծաղեցին, իսկ Վանյան լոց յաջագ:

1

Իմ հայրը շոփեր եր:  
Մի որ նա Լենինին ավտոմոբիլով պէտք և տանեց զբա-  
սանեցի:

Յես խնդրեցի, վոր ինձ ել տանի:  
— Զի կարելի, —պատասխանեց հայրս:  
Քիչ հետո Լենինը դուքս յեկավ և ուզեց ավտոմոբիլ  
նստել:

Ինձ նկատեց ու հարցրեց.

- Ո՞ւմ տղան ես:
- Իմն ե, —պատասխանեց հայրս:
- Անունդ ինչ ե:
- Պետյա:
- Դե, նստիր, Պետյա, ավտոմոբիլով ման գանք:

2

Ավտոմոբիլը սլացավ:  
Յերբ հրապարակ հասանք, Լենինն ինձ իջեցրեց ու  
տաց.

- Նու, Պետյա, վազիր տուն:
- Յես վազեցի տուն ու մայրիկիս տացի.
- Մայրիկ, յես Լենինի հետ ավտոմոբիլով ման յեկա:
- Յերբեք չեմ մոռանա այդ հանդիպումը:
- Յերբ այդ մասին պատմեցի ընկերներիս, նրանք տացին:
- Վորքան յերջանիկ ես զու:




11. ՎՈԼՈԴՅԱՆ

Լենինը, վորին փոքր ժամանակ Վոլոդյա եյին կանչում,  
շատ աշխատժ տղա յեր: Սիրում եր վազվզել, թռչկոտել, յեր-  
գել, ծառ բարձրանար, ձուկ վորսալ: Սիրում եր յերաժշտու-  
թյուն, շախմատ խաղալ:

Վոլոդյան կարդալ-զբել սովորեց իր մորից, հինգ տարե-  
կան հասակում: Ինն ու կես տարեկան հասակում նա չոբ-  
րորդ դասարան մտավ:

Դոլրոցում նա ոգնում եր ընկերներին: Դասի ժամանակ

ուշադրությամբ լսում եր: Նրան բոլորը սիրում եյին:  
Տասնյոթ տարեկան հասակում Վոլոդյան միջնակարգ  
դպրոցն ավարտեց:



13. ՈՒՄ Ե ՆԱՅՈՒՄ

Պիոներներ Շողիկն ու Սուրբիկը Լենինի մեծապետ նկարը տանում եյին, վոր կախեն իրենց ակումբում:

Ճամփին նկարը դրին մի ծառի տակ, վոր հանգստանան:

— Լենինն ինձ ե նայում, — ասաց Սուրբիկը:

— Վհչ, ինձ ե նայում, — ասաց Շողիկը:


Այդ ժամանակ նրանց մոտեցավ իրենց ջոկատավարը:

— Այդ ինչ վեճ ե, — հարցրեց նա:

— Ընկեր Յերվանդ, Շողիկն ասում ե, թե Լենինն իրեն ե նայում, իսկ յես ասում եմ, վոր ինձ ե նայում:

— Լենինը բոլորին ե նայում, — պատասխանեց ջոկատավարը:

Հ-ՀՀԿՈՒՐ




14. ԸՆԿԵՐ ՍՍԱԼԻՆԻ ՊԱՏԱՆԵԿՈՒԹՅՈՒՆԸ

Յես ու Իոսիֆը սովորում եյինք Գորու ծխական դրագը բոցում:

Նա նիհար եր, բայց առողջ: Իոսիֆն ուրախ և ընկերասեր տղա յեր: Սիրում եր գնդակ և լախտի խաղալ: Նա կարողանում եր լավ խաղացող ընկերներ ընարեր, այդ պատճառով ել մեր խումբը միշտ խաղը տանում եր: Իոսիֆը լավ նկարում եր, շատ գրքեր եր կարդում: Նա իր կարդացածի մասին պատմում եր մեզ:

Նա չեր հպարտանում, վոր ինքը մեզանից լավ ե սովորում: Նա ոգնում եր, վոր մենք քարտեզներ նկարենք, խնդիրներ լուծենք, դաս պատրաստնեք:






ԻՌԱԹ ՎԻՍՍԱՐԻՈՆՎԻՉ ՍՏԱԼԻՆ

### 15. ՅԵՐԿԱՐ ԱՊՐԻ ՄԵՐ ՍՏԱԼԻՆԸ

Յերկար ապրի մեր Ստալինը  
Կարմիր արևի պես,  
Թող մեզ վրա վստահ լինի.  
Կանգնած ենք սարի պես:

Հաստատ մնա մեր Ստալինի  
Կուռ ու պողպատ կամքը,  
Վոր միշտ այսպես ազատ լինի  
Մեր վառ, ուրախ կյանքը:

Յերկար ապրի մեր Ստալինը  
Կարմիր արևի պես,  
Թող մեզ վրա վստահ լինի.  
Կանգնած ենք սարի պես:



ԸՆԿԵՐ ՄԻԽԱՅԻԼ ԽՎՈՆՈՎԻՉ ԿԱԼԻՆԻՆ  
ԽԱՀՄ Գերադույն Խորհրդի նախագահոթյան նախագահ:



ԳՅՈԶԵԽԱՆ ԱՎ ՄԻԽԱՅԼՈՎԻՉ ՄՈԼՈՏՈՎ  
ԽԱՀՄ Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի նախագահ:



ԱԼԵՔՍԵՅ ՍՏԱԽՈՎ

### 16. ՄԵՐ ՍՏԱԽԱՆՈՎԱԿԱՆՆԵՐԸ


Դոնքասի ածխահատ բանվոր Ալեքսեյ Ստախանովը  
ու արագ աշխատելու նոր ձև գտավ:

Նրան հետևեցին մեր բանվորներից և կոլտանտեսա-  
կաններից հարյուր հազարավորները:

Եյդ շարժումը կոչվում է ստախանովական շարժում,  
որը տարածվել է մեր լայնարձակ տեղերում:

### 17. ԱՆՎԱԽ ՌԴԱԶՈՒՆ

Կուզեմ լինել ողաչու,  
Ամպերի մեջ սլանամ,  
Խորհրդային աշխարհի  
Անվախ հերոս յես դառնամ:  
Թռչեմ, անցնեմ բևեռով  
Չյունոտ, ամպած լեռներով,  
Ապա կրեմլ գնամ յես  
Համարձակ ու պարզերես:  
Մեծ Ստալինն ինձ տեսնի,  
Ու ճակատս համբուրի,  
Ասի. «Կեցցես դու, հերոս  
Խորհրդային աշխարհի»:



### 18. ՍՍ.ԹՈՒՑՑՆԵՐԻ ՄԵԶ

1

Սառնամանիք եր: Փշում եր սառը քամին, բուքը  
վոննում եր: Զորս կողմը ձյուն ու ստույց եր:

Զորս ողանակ թռչում եյին Հյուսիսային բեվեռի վրայով:

Ահա ողանակերը ոլտույտներ կատարեցին և իջան մի  
մեծ, շարժվող սառցի վրա:

Ողանակերը վճրադարձան, թռնելով շարժվող սառցի  
վրա չորս խիզախ գիտնականների՝ Պատլանինին, Կրենկելին,  
Շերշովին և Թեոդորովին:

Նրանք մնացին այնտեղ պարզելու, թե ինչ խորու-  
թյուն ունի ովկիանոսը, ինչ կենդանիներ և բույսեր կան  
այդ ջրերի մեջ և ուսումնասիրեն յեղանակը:

Իսկ սառույցը շարունակ գետի արևմուտք եր շարժ-  
վում:

Ինն ամիս նրանք մնացին այդ սառցի վրա:

Իրենց իջած տեղից յերկու հազար հինգ հարյուր կի-  
լոմետր հեռացել եյին:

Բայց ահա ավելի սաստիկ սկսեցին փչել քամիները,  
սառույցներն իրար զիպան, սկսեցին ջարդգել:

Այն սառույցը, վորի վրա գտնվում եյին գիտնական-  
ները, նոյնպես կտոր-կտոր յեղափ: Մնացին մի փոքրիկ  
սառցի վրա:

Յեվ ահա մի որ քաջ ուագիստ կրենկելը խոսեց.

«Մեր սառույցը կտոր-կտոր յեղափ: Մնացել ենք մի  
փոքրիկ սառցի վրա: Բայց ուտելու պաշար ունենք, եղի  
կարող ենք մնալ»:

Նրա ձայնը լսեց մեր կուսակցությունը, մեր կառա-  
վարությունը, մեր սիրելի հայր Ստայինը:

— Վերցրեք չորս հերոսներին սառցի վրայից, — կար-  
դադբեց առաջնորդը:

3

Յեվ գնացին վերցնելու:

Գնացին սառցահատ «Մուրմանը», «Թալմիրը», «Յեր-  
մակը», անվեներ ողաչուները:

Մի որ սառցահատները մոտեցան սառցին:

Չորս գիտնականները նավ նստեցին և Մոսկվա վե-  
րադարձան:

4

Տամայակ տարիներ շարունակ շատ մարդիկ ցանկա-  
ցել են բեկու գնալ, բայց չեն կարողացել:

Բեկուը խորհրդացին մարդիկ տիրեցին:

Այնտեղ, համբաւնական սառույցների մեջ, աշխարհի  
ամենաբարձր տեղում՝ բեկուում, ծածանվում է մեր դրո-  
շակը:

## 19. ՄԻ ԲԱՑ ՆԱՌԱԿ ԱՄԵՆՔԻՆ

Դաշտ ու անտառ, գյուղի ճաժիկան  
Ծածկվել ե մի թիզ ձյունով,  
Ել չի ճարվում ուտելու բան,  
Ո՞վ ե տեսել ես տեսակ սով.  
Վ՞հչ մի ցորեն, վ՞հչ մի հատիկ...  
Խնդրում ենք ձեզ, բարի մարդիկ,  
Ովնեցեք մեզ, մի կտոր հաց,  
Կոտորվեցինք, մեռանք սոված:

Շուտով կզան որեր գարնան,  
Մենք ձեզ համար կերգենք զվարթ,  
Յեվ փոխարեն ձեր լավության,  
Ձեր պարտեզը, այդին ու արտ  
Մենք կմաքրենք թրթուրներից,  
Ճիճուներից ու փորդերից...  
Միայն հիմի մի կտոր հաց,  
Կոտորվեցինք, մեռանք սոված:

Մի խումբ ծտերի կողմից  
Ծիտիկ ճնճղուկան

## 20. ԱՇՈՏԻԿԻ ՎՈՅՏԸ

I

Աշնան նախշուն որերից մեկն եր:  
Առավոտյան Մալոն ու Աշոտիկն արագ-արագ դրա-  
բոց եյին գնում:

Տրամվալը զբնդոցով անցավ փողոցով: Հանկարծ Աշոտիկն  
մկսեց վագելք:




— Աշոտիկ, Աշոտիկ, այդ  
ինչ ես անում: ԶԵ վոր դու  
խոստացել ես միայն կայա-  
րանում տրամվայ: Նստել,  
ձայն տվեց Մարոն:

Աշոտիկը չպատասխանեց: Նա վաղեց, վաղեց, ուղեց  
թաշել, տրամվայ նստել, բայց ընկավ...

Ել չիմացավ Աշոտիկը, թե ինչպես տրամվայի անիզն  
անցավ իր վրայով, միլիցիոները տրամվայը կանգ-  
նեցրեց, հեռախոսով շտապ ոգնության ավտոմեք գանչեց,  
իրեն հիվանդանոց տարան, մի վոտը կտրեցին...

## II

Մայիսի սիրուն որերից մեկն եր:  
Սուավոտյան Մարոն ու Ա-  
շոտիկը դանդաղ քայլերով  
դպրոց եյին գնում:



Աշոտիկը նոր եր դուրս յե-  
կել հիվանդանոցից: Մի վո-  
աանի յեր. հենակով եր ման գալիս:

Տրամվայը զբնգոցով անցավ փողոցով:  
Աշոտիկը կանգ առավ նայեց տրամվային, նայեց Մա-  
րոյին, աչքերից արցունքներ հասեցին:  
Նա հեկեկալով ասաց.

— Գիտե՞ս, Մարո, յեթե այն ժամանակ քեզ լոեյի, այժմ  
մի վոտանի չեյի լինի...

## 21. ՄԿԱՆ ՏՈՒՆԸ

— Ուր ե, մուկիկ, քո բունը:  
— Հա, հեռու չե իմ տունը.  
Կերթաս այսպես դու առաջ,  
Հետո քիչ ձախ, հետո աջ,  
կենես քիչ վեր,  
կիշնես ցած,  
Այնտեղից ել  
Քիչ անցած՝  
Նորից քիչ ձախ, նորից աջ  
Բունս կգա քո առաջ:  
Բայց դուռս ու շեմ,  
Պետք և ասեմ,  
Սաստիկ փոքր ե, դրացի,  
Ներս մտնելիս կռացի:

## 22. ՄՐՋՅՈՒՆՆ ՈՒ ԱՂԱՎՆԻՆ

(Առակ)

Մրջյունը մոտեցավ առվակին, վոր ջուր խմի: Ալեք  
խիեց ափին և մրջյունն ընկավ ջրի մեջ:



Աղավնին արդ տեսավ և առվակի մեջ մի ճյուղ գցեց:  
Մրջյունը բարձրացավ ճյուղի վրա և աղատվեց:

Մի քանի որից հետո մըջունը տեսավ, վոր վորսորդն  
ուզուս և սպանել աղավնուն:

Մըջունը մոտեցավ վորսորդին և նրա ձեռքը կծեց:  
Վորսորդի գնդակը վրիպեց:  
Աղավնին աղատվեց:

### 23. ՈՒԲԱԳ ՅԵՎ ՍՂԱՅ

Մի մներ ուրագի պես  
Միշտ գեղի քեզ, միշտ դեղի քեզ,  
Այլ յեղիր սղոցի պես՝  
Մին դեղի քեզ, մին դեղի մեզ:

### 24. ՅԵՐԿՈՒ ԽՈՓ

Մինույն յերկաթի կտորից դարբնոցում շինված եյն  
յերկու խոփ:


Նրանցից մեկն խոկույն գնաց աշխատանքի, խոկ  
միուսը յերկար ժամանակ ընկած եր դարբնոցում:

Մի ժամանակ այդ յերկու խոփերը կրկին պատահե-  
ցին իրար:

Աշխատող խոփն արծաթի պես փայլում եր, խոկ  
պարապ մնացած՝ սեացել եր ու ժանդով պատել:

— Ասա, խնդրեմ, ինչի՞ցն ե, վոր դու այդպես փայ-  
լում ես, — հարցըց ժանդատած խոփն իր ընկերոջը:

— Աշխատելուցն ե, սիրելի ընկեր, — ոլատասխանեց  
փայլուն խոփը: — Խոկ յեթե դու ժանդուել ես և առաջվո-  
նից ավելի ես վատացել, առ նրանից ե, վոր յերկար  
ժամանակ անգործ ես յեղել:




### 25. ԾԱՐԻԿԱ

Շարիկը հիվանդացավ:  
Պետիկը նրա բնի մեջ չոր խոտ փռեց, տաք կաթ  
խմեցըց:  
Շարիկն առողջացավ: Սկսեց Պետիկի յետեվից վաղ-  
վրգել:


Մի անգամ Պետիկը գետի ավին ձուկ եր վորսում:  
Նա սայթաքեց և ընկավ գետը:  
Շարիկը մտավ ջրի մեջ, առամերով Պետիկի շարե-  
րից բռնեց և ափը դուրս բերեց:

### 26. ՀԱՎԱՆ ՈՒ ԿԱՏՈՒՆ

Զալ հավիկը և սև կատուն  
կոկվ տալով վաղեցին տուն:  
Հավիկն ասաց. — Ցես ասում եմ,  
Վոր տատիկի սիրելին եմ:  
Նրա համար ձու յեմ ածում,  
Թուխս եմ նստում, ճոել հանում:  
Պարզ ե, վոր մեր տանտիրուհին  
Բոլորից շատ ինձ ե սիրում:  
— Ցես փիսիկն եմ խանում-խաթուն,



Գիշեր-ցերեկ զգաստ, արթուն.  
Տունն եմ պահում գաղաններից,  
Են անիրավ մկնիկներից:  
Մեր տատիկը թե քեզ սիրեր,  
Չեր նստեցնի հավաքնում,  
Ինձ ե սիրում, վոր իր կողքին  
Տեղ ե ավել տան անկյունում:  
Տանտիրուհին լսեց, ժամաց.  
Կատին, հավին այսպես ասաց.  
— Յերկուսիդ ել շոտ եմ սիրում,  
Իմ չալ հավիկ, փիսիկ սիրուն:  
Սիրում եմ ձեզ, սիրում անչափ,  
Այ, մեր պստիկ շնիկի չափ:



## 27. ԳԱԶԱՆՑԱՆՑՈՒՄ

Մեր դասարանն ուսուցչուհի ընկեր Հասմիկի հետ  
գնաց գաղանանոցք:

Գաղանանոցը գտնվում եր բանվորական ակումբի  
բակում:

Մուտքի առաջ շարված ելին կենդանիների և թըռ-  
չունների նկարներ:  
Ներս մտանք:  
Կենդանիները վանդակների մեջ ելին:  
Այստեղ ելին՝ առյօնը, վազը, բորենին, ջայրամը, փիղը  
գալլը, աղվեսը, մի քանի ահազին ոձեր, տեսակ-տեսակ  
կապիկներ և ուրիշ շատ կենդանիներ ու թոշուններ:  
Ընկեր Հասմիկը պատմում եր մեզ յուրաքանչյուր  
կենդանու մասին, թե վորակից ե բերված, ինչով ե կե-  
րակրվում:  
Ինձ ամենից շատ դուր յեկավ կանաչ թևերով թութա-  
կը, վորը նայում եր մեզ և շարունակ կրկնում.  
«Յերեխնեք, յերեխեք,  
Շաքար տվեք, շաքար տվեք»:

## 28. ՊԻՌՆԵՐԱԿԱՆ ՊԱՐՏՅԱՅ

1

Հանդստի որ եր:

Պէռներներ Հային ու Շողիկը ճանապարհ ընկան մոտիկ  
գյուղի կոռպերատիւլը ըսթերցանության գրքեր զնելու:  
— Յես «Վոսկի ձկնիկն» եմ զնելու, — ասում եր  
Հայիկը:

— Յես ել «Գիքորը», — ասում եր Շողիկը:

Այսպես խոսելով զնելում ելին:

Մեկ ել մի ֆուրդոն դրդուալով ու ճոճուալով յեկավ  
ու անցափ:

Ֆուրդոնի մեջ գլխին կարմիր թաշկինակ կապած մի  
կին եր նստած:

Ֆուրդոնից մի կապոց վայր ընկավ:

Հայեն ինչքան կանչեց. «Մորաքնւյր, մորաքնւյր,  
Փուրդոնը կանգնեցրու», մորաքույրը շահց.  
Հոռիւնելու մասին պատճենը առաջ է առաջ գույնը առաջ է առաջ գույնը

Յողիկը կապոցը վերցրեց: Բաց արին, տեսան, վոր մեջը  
շատ փող կա:

— Ի՞նչ անենք, Հայկ, — հարցուեց Շողիկը:

— Ի՞նչ պիտի անենք, — պատասխանեց Հայկը: — Կարմիր թաշկինակ կապած մորաքը ոչը կդանենք, փողերը կը տանք իրեն:

29

Գյուղ համելով, մտան կսովերառիսի խանութը։ Կարմիր թաշկինակ կապած մողաքույրն այնտեղ ապրանք երգնուած։

Յեղբ զնած ապրանքների գինը հաշվեցին և նա մոտեսակ դրամարկղին, վոր մուծի, հանկարծ դոչեց.

— Վահան Փողիս կապոցը կորցրել եմ: Ամբողջ տարվա  
աշխատանքու երան չիմի ինչ անեմ:

Այս ժամանակ Շողիկը ծոցից հանեց թաշկինակը և  
տիրած տաւով, ասաց.

— Ահա քո կապոցը, մորաքնւյթ, ճանապարհին ենք  
դատել:

Մորաքույրը մին Շողիկին, մին Հայկին նայեց, ապա  
զրկեց, յերկուսին ել համբուրեղ ու ասաւ.

— Դուք իսկական պիոներներ, եք, Խորհրդային յեր-  
կար ազնիկ զավակներ:

Մորաքույրն ուղաւմ եր փող տալ, բայց չվերցրին:  
— Մենք մեր պիտներական ապօպան ենք կատառե-

ասացին նրանք:

Thay đổi khí hậu  
tại đây ngày nay  
đang làm biến đổi  
quá trình phân giải  
gây ra những  
thay đổi  
như biến đổi  
nhìn thấy rõ rệt  
trong thời gian



ԸՆԿԵՐ ՎՈՐՈՇԻԼՈՎ

Խորհրդային Մխության մարշալ, Պաշտպահության  
ժողովրդական կոմիսար

### 29. ՆԱՄԱԿ ՎՈՐՈՇԻԼՈՎԻՆ

Կիմ Վորոշիլովին  
Նամակ գրեցի։  
Հնկեր Վորոշիլով, —  
Այսպես սկսեցի։ —  
Յեղբայրս այս տարի  
Բանակ ե գնում,  
Գիտեմ վաղուց ե նա  
Դրան յերազում։

Վարդետ գարբին ե  
Նա աշխատանքում,  
Լույս մարտիկ կլինի  
Կարմիր բանակում։

Ընկեր Վորոշիլով,  
Կստահիր նրան,  
Կմենի՛ չի թողնի  
Վոր մեղ վրա դան։

Լսել եմ՝ ֆաշիստը  
Ուզում ե կռվել,  
Խորհրդի յերկիրը  
Մանել, թալանել։

Ընկեր Վորոշիլով,  
Ապագա մարտում  
Նշանակիր նրան  
Առաջին դիրքում։

Իսկ յերբ կմենի  
Իմ յեղբայրը մեծ,  
Այդ մասին իսկույն  
Նամակ կդրեմ։

Ընկեր Վորոշիլով  
Շուտով բոյ կառնեմ,  
Յեղբորս փոխարեն  
Դիրքում կկանգնեմ։

### 30. ՀԱՆԴԻՊՈՒՄ

Մի հրեական կոլանտեսության մեջ ապրում եր կանաչ,  
շարժում աշքերով, կարճլիկ, սև ծամով մի փոքրիկ աղջիկ  
անունը՝ Յուսէնկա։ Նա կոլանտեսության նախագահի աղ-  
ջիկն ու։

Մի որ Մուսենկան տանը մենակ եր մնացել։  
Նա բայց պատուհանից փողոց եր նայում։  
Հանկարծ սուլոցներ լսվեցին և փոշու քուլաների միջից  
մի ավտոմոբիլ գուրս յեկավ։ Ավտոմոբիլը կանգնեց իրենց  
տան մոտ։ Մուսենկան լսեց, վոր միջանցքով մի մարդ և  
կալիս։

Դուռը բացվեց և սենյակ մտավ մի զինվորական։  
— Բարեկվ փոքրիկ աղջիկ։  
Մուսենկան շատ ուրախացավ ու գոչեց։  
— Դյաղյա Վորոշիլովն ե։  
Ընկեր Վորոշիլովը զրկեց նրան ու հարցըեց։  
— Իսկ դու վճրտեղից ես ինձ ճանաչում։  
Աղջիկը մատը մեկնեց դեպի պատից կախված մեծ  
նկարն ու ասաց։

— Այս, դու հենց այս դյաղյան ես։



### 31. ՓԶԱԿՈՒՄ

二

Մի անգամ, յերեկոյան դեմ Պետրոն ու Յակովը  
գնացին անտառ ընկույզ հավաքելու:  
Նրանց գյուղը սահմանի մոտ եղ:  
Յերեխաները մտան անտառ և շուտով մի ամբողջ  
տոպակ ընկույզ հավաքեցին:  
Հանկարծ խշչոց լսվեց:  
Յերեխաներն ուշադրությամբ նայեցին և մի անծանոթ  
մարդ տեսան:

Անծանոթ մարդն այս թփի տակ եր մտնում, այն թփի  
տակ եր մտնում, կրանում եր, դես ու զեն եր նայում:  
— Վորսորդ կինի, — ասաց Գևարոն:;  
— Բա ինչու հրացան չունի՞ Գուցե վատ մարդ ե,  
յեկել ե կոլանտեսության դեղերը կրակ տա...  
— Գիտե՞ս ինչ, Գետրո, — շնչաց Յակուքը Գևարոյի  
ականջին, — յես գնամ սահմանապահներին խմաց տամ, իսկ  
զաւ մատ այստեղ ու հետեւիր:;  
**Յակուքը գնաց:**

«Վորտե՞ղ թագնվեմ», — մտածեց Պետրոն:

Դես ու դեն նայեց՝ մի փշակ տեսավ: Տուլրակը վերցրեց և այդ փշակի մեջ մտավ:

Անծանոթը յեկավ, վոր փշակի մոտից անցնի, տեռավ փշակից մի պարան և կախվել:

Տուլրակի սլաքանն եր, վոր Պետրոյի անզգուշության պատճռով կախվել եր:

Անծանոթը պարանը բռնեց և սկսեց քաշել:

Հենց այդ ժամանակ լսվեց.

— Ձեռքերդ վեր:

Թփերի յետեմից դուրս յեկան սահմանապահները և անծանոթին ձերբակալեցին: Պարզվեց, վոր նա ուրիշ յերկրից յեկել ե, վոր մեզ մնաս տա:

Իրենց զգոնության համար Պետրոն ու Յակուբը շորեր ստացան: Ճիշտ այնպիսի շորեր, ինչպիսին հագնում են սահմանապահները:

— Յերբ վոր մէծանաք, իսկական սահմանապահներ կդառնաք, — ասաց ավագ լեյտենանտը:

### 32. ՊԻՌՆԵՐ ՊԵՏՐԻԿ

1

Պիօներ Պետրիկը սլաքավարի վորդի յեր:

Գարնան սկզբին մի որ, յերբ Պետրիկը գոլրողից յեկավ, ճաշեց և դասերը սովորեց, մայրիկն ասաց.

— Պետրիկ, մի քիչ հաց տար հայրիկից համար:

Քիչ հետո Պետրիկը քայլում եր անտառի միջով, յերկաթզծի կողքով:


2

Մասերը ծաղկել ելին: Փշում եր մեռմ զեփյուռը: Փոքրիկ թոշունները թփերի մեջ ծլվում եյրա:

Հայրիկի տնակը հեռու չեր. Պետրիկը չորս կիլոմետք ձանապարհ պլիտի կտրեր:

Պահառ յնպանակ եր: Բայց շուտով յերկինքը ծածկ վեց ամպերով, վարոտաց, կայծակի շանթեր յերկացին, հորդ անձրև թափվեց: Պետրիկը մտավ մի մեծ ծառի տակ և սպասում եր, վոր անձրևը դադարի:

Բայց անձրևը քանի գնում վարարում եր:



3

Հանկարծ դիմացի սարից մեծ-մեծ քարեր պոկվեցին, գլուղալով ցած գորգեցին և ընկան ոելսերի վրա: Ճանապարհը փակվեց:


Այդ ժամանակ շոգեմեքենայի սուլոց լսվեց:

— Մարդատարն ե ... Ի՞նչ կինի ... Բոլորը, բոլորը կմեռնեն, — անցավ Պետրիկի մտքով:

Անձրևն ագելի վարարեց, շոգեմեքենայի սուլոցը ավելի մոտիկից լսվեց:

Պետրիկը փողկապը հանեց, ծառից մի ճուղ պոկեց, փողկապը կապեց ճուղի ծայրին, բարձր բռնեց և սկսեց առաջ վագել, գոռալով:

— Մեքենակար, մեքենավար, ճանապարհը փակ ե...  
Հենց թափված քարերի մոտ գնացքը կանգ առավ։  
Ճամփորդների կյանքը փրկված եր։



### 33. ՄԱՐԻԿԱՆ

Ֆաշիստներն ողանավերից սումբեր ելին զցում իսպանիայի մի անգամապան գյուղի վրա։

Շուտով ամբողջ գյուղը կործանվեց։ Բնակիչների մի մասը կոտորվեց, մյուս մասը փախավ։

Գյուղում մասցին միայն ծերունի Պետրոն և իր թուու Մարիկան։

Լուսաբացին ֆաշիստները մտան գյուղը և յեկան Պետրոյի խրճիթը։

— Վեր կաց, ծերունի սատանա, — գոչեցին ֆաշիստները։

Ծերունին լուռ ցույց տվեց լաթերով փաթաթված իր զոտները. նա գնացքի տակ եր ընկել, զոտները ծնկներից կտրել ելին։

— Քեզ ասում են վեր կաց, — գոռաց մի զինովոր և երացանի հարվածով ծերունուն մահճակալից ցած դցեց։


— Դու այստեղ մնացել ես, վոր թոռանդ միջոցով՝  
մեր մասին տեղեկություններ տաս, — գոռաց մի ուրեշ  
փաշիստ։

Յեզ ծերունուն Մարիկայի աչքի առաջ կախեցին  
ծառից։

— Գաղաններ, այդ ինչ եք անում, — սարսափից ու  
վշտից գոչեց Մարիկան։

Աղջկան ծեծեցին և ցախատանը բանտարկեցին։  
Բայց նա ցախատան տախտակներից մեկը պոկեց ու  
փախավ։

Թփերի և առուների մեջ թագնվելով, յերեք որից  
հետո նա հասավ իր հարազատ հանրապետականներից  
դիրքերին։



### 34. Ա. ՐԵՎ

Արև, արև, յեկ, յեկ,  
Զիզի քարին վեր յեկ։  
Սևաւ ամպեր, հեռացեք,  
Արևին ճամփա տվեք։

Թողեք, վոր նա զա մեզ մոտ,  
Նրա լուսին ենց լառուտ  
Կարմիր արև, յեկ, յւէ.  
Նախուն քարին վեր յեկ:

Արևը հաղթեց ամպերին,  
Շողը ձգեց սարերին,  
Զիզի քարը, տես, տես,  
Պապղում ե վոսկու պետ:  
Միրուն արև, միշտ յեկ,  
Զիզի քարին վեր յեկ:

### 35. Մ Ա. Բ Տ Է

Ախ, եսպես ել գիտ ամիս,  
Մարդու հանգիստ չի տալիս:  
Եսոր ուրախ որ կանի,  
Վաղը՝ անձրե ու քամի,  
Առավոտը՝ պայծառ ոդ,  
Կեսորը՝ մուլթ ու առպոտ:  
Մին հագնում ե սպիտակ,  
Մին կանաչին ե տալիս,  
Մի որ ցուրտ ե, մի որ տաք,  
Մին խնդում ե, մին լալիս...  
Ախ, եսպես ել գիտ ամիս...

Գարնան ամիսներն են.  
մարտ, ապրիլ մայիս

### 36. ԶՈՐՅ ՅԵՂԱՆԱԿ

1

Յես բերում եմ պայծառ արե ու տաք որեր:  
Յես ծածկում եմ դաշտերը դալար խոտերով ու դար-  
բար և անտառները կանաչ տերեներով: Յես սեռում եմ  
ծաղուկներ ու թիթեռներ, կանչում եմ թռչուններին հեռու-  
յերկրներից և աշխարհը լցնում յերգերով:  
Միթե ինձ չեք սիրում:

2

Յես վոսկեղոծում եմ արտերը և կուացնում հասկերի  
գլուխները: Յես կախ եմ անում արդինեռում տանձ, խրն-  
ծոր, զեղձ ու խաղող: Յես ճուտինեռոն թռչնում եմ  
բներից և հանում մանուկներին զով անտառը, աղբյուր-  
ների մոտ, ազատ սարերը:

Միթե ինձ չեք սիրում:

3

Յես գույն-գույն ներկում եմ ծառերը և ճամփու-  
յեմ զնում թռչուններին զեպի տաք յերկրներու: Յես լցնում  
եմ մառանները մրգերի կախաններով, շիր ու չամչով: Յես  
բաց եմ անում ձեզ համար դպրոցի դռները:

Միթե ինձ չեք սիրում:

4

Յես խաղացնում եմ ձյունի փաթիներն ողի մեջ և  
ծածկում սար ու ձօր սպիտակ վերմակով: Յես կապում  
եմ գետերն ամուր սառուցով: Յես բերում եմ ձեզ համար  
ձևագնդի, սանակ ու սղզան:

Միթե ինձ չեք սիրում:

37. ՏԱՐՎԱ. ԱՄԻՍՆԵՐԸ

Մարտը տալիս ե ձնծաղիկ,  
Ապրիլը՝ կապույտ մանուշակ,  
Մայիսին բացվում ե վարդը,  
Սունակը յերգում անուշակ  
  
Հունիսը մեզ խոտ ե տալիս,  
Իսկ հուլիսն առատ ցորեն,  
Ողոստուր տանձ ու խնձոր,  
Յեվ ուրիշ շատ հասուն մրգեր

Սեպտեմբերը մեզ տալիս ե  
Խաղողի բոլոր տեսակը,  
Հոկտեմբերը կարմիր գինի,  
Նոյեմբերը բողին ու տակը

Դեկտեմբերին ձյուն ե գալիս,  
Հունվարին ծածկում սար ու ձեր,  
Փետրվարին սկսվում ե  
Փոփոխակի ցուրտ ու տաք որ

Այսպես ահա բոլոր տարին  
Քավալվում ե չորս շրջանում,  
Այդ պատճառով չորս յեղանակի  
Չորս ժամանակ ե մեզ բերում:

ՀԱՆԵԼՈՒԿ

Չորս յեղբայր են,  
Ամեն սարի  
Յերկրի վրա  
Ման են շալիս

38. ՄԱՅՐԻԿԱՆԵՐԻ ՄԱՍԻՆ

— Իմ մայրիկը ողաչու յե,  
ողաչու,

Թեփեր առած ամպերի մեջ ե  
թռչում:

— Իսկ իմ մայրն ինժեներ ե,  
ինժեներ,  
Կառուցում ե գործարաններ,  
դպրոցներ:



— Իմ մայրիկը վագոնավար ե  
խիզախ,

Զնդզնդոցով անցնում արագ  
աջ ու ձախ:

— Իմ մայրիկը տրակտորիստ ե  
կովազում:


Վար ե անում, ուրախ-ուրախ  
յերգ ասում:

— Հիմի բոլոր մայրիկները  
մեր յերկրում

Ամեն տեսակ աշխատանք են  
կատարում:

Վորը բժիշկ, վորը հոգիչ,  
գործավար,

Մեր հայրերին, յեղալիներին  
հավասար:



## ՅԵՐԿՈՒ ԿՈԼՏՆՏԵՍԱԿԱՆ

Վահանն ու Սողոմոնն աշխատում եցին միենույն կոլտնտեսության մեջ:

Վահանն ամբողջ որն աշխատում եր:

Իսկ Սողոմոնը գաշտ եր դուրս գալիս, մի կես ժամ աշխատում, հետո նստում հանգստանում:

Հաճախ ել աշխատանքի չեր գալիս:

Աշունը յեկավ:

Կոլտնտեսականներն սկսեցին հաշվել, թե ով ինչքան ե աշխատել:

Վահանի աշխորը շատ եր: Նա ստացավ շատ ցորեն, կարտոֆիլ և ուրիշ բաներ: Բացի զրանից նա այնքան փող ստացավ, վոր նոր տուն շինեց:

Սողոմոնը քիչ բան ստացավ:

— Ինչու, — բարկացավ նա:

— Վճար թե ինչու: Միթե չգիտես, վոր՝ ով լավ ու շատ ե աշխատում, նա շատ է ստանում, — ասաց Վահանը:

## 40. ԿԱՆԱԶ ԱԽՊԵՐ

Եր, կանաչ ախպեր,

Եր, ձաճանչ ախպեր,

Արի, քեզ հետ բեր

Արեի շողեր,

Բեր անուշահոտ

Ծիր, ծաղիկ ու խոտ,

Կարկաչուն վտան,

Ծերկինք կապուտակ

Խատուտիկ հավքեր,


Զբնդան յերգեր,

Գառների մայուն,

Խաղ, ուրախություն...

Ե՞ր կանաչ ախպեր,

Ե՞ր ձաճանչ ախպեր:



ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆ

## 41. ԳԱԼԻՆԱՆ Գ.Ս.Լ.Բ

Փարուն եւ:

Զյունը հալվում եւ:

Փոքրիկ առակները դեպի գետն են վաղում:

Զյունի տակից գութս ե յեկել ձնծաղիկր:

Հենց ձյունը հալվում ե թե չե, հողի միջից ծլում են, բարձրանում խոտերն ու ծաղիկները:

Թփերի մոտ, անտառի արևոտ կողմում, բացվում են մանուշակները:

Մեղուները փեթակներից դուրս են թռչում, ծաղիկների մեջ կեր վորոնում:

Վոշխարների հոտերը գաշտ են դուռս գալիս:

Դարձանանը մեր կոլտնտեսության յեռուն աշխատանքը ակավում եւ:

42. Գ.Ա.ՐՈՒԻՆ

Զուգվել են կրկին  
Անտառ ու այդի,  
Վշշում ե ուժգին  
Զուրը գետակի:

Հավքերը սիրուն  
Համերգ են կազմեր  
Արտում ու դաշտում  
Յերգ ու հորովել:

Թիթեռներն ուրախ  
Թոչում են դես-ղեն...  
Զան, տեսքիդ մատադ,  
Գարուն ե արդեն:

43. ԾԱ.ՌԱ.ՏՈՒՆԿ

Փոս ենք փորում,  
Ծառ ենք տնկում  
Ուրախ յերգով ու կանչով,  
Վոր մեծանա  
Ու ճյուղեր տա,  
Սածկվի սիրուն կանաչով:  
Յեզ յերբ ամռան  
Արեց գտ  
Իւ շողերով շողշողուն,



Ծառը սիրով  
Հանդիսա կտա  
Մեղ իր անուշ ստվերում:

44. Ա.Ր.ՋԱ.Գ.Ա.ՆՔ

Փոքրիկ Արտաշեսը շվշացնելով գնում եր ձորով:  
Երենց հորթը վնասուելու:  
Նրան թվաց, վոր մի ուրիշն ել և շվշացնում:  
Հենց իմացավ լնկերն ե, կանգնեց, ձայն տվեց.  
— Վահան, դու յետ:  
— Յես...  
— Մեր հորթն մւր գնաց, տեսմբ:  
— Մար...  
— Հանմք ես անում, ինչ ե:  
— Զե...  
— Վահան, եղ հո գելը կուտի:  
— Ուտի...  
Արտաշեսը լալով վազեց տուն, տեսավ հորթն ել և  
տանը, Վահանն ել:



## 45. ԱԱՐՑԱԿԻ ԲՈՒՆԵ

Սարյակնեղը մեր հերպան  
Ես ուր գոր ե պիտի գան,  
Բայց անսակը հնացած  
Պետք չի գալու ել նըսանց:

Կարեն, արի միասին  
Նոր բուն շինենք սարյակին,  
Թե չե՝ տեսնի բուն չկա,  
Ել մեր բակին մոտ չի դաւ

Վորդ ու թրթուր զանազան,  
Յես ի՞նչ գիտեմ ել ինչ բան,  
Ներս կմտնեն մեր այլին,  
Վնաս կտան ահազին:

Դե վեր, Կարեն, մուրճը բեր,  
Ես ել՝ տախտակ ու մեխեր:

## 46. ՄԱՆՈՒՇԱԿ

Կապույտ գլխով, կանաչ վոտով  
Ես ծաղիկ եմ անուշ հոտով:  
Թեև տունկս փոքրիկ ե, ցած,  
Արսաներում միշտ թագ կացած,  
Բայց իմ փունջը, իբրև մի զարդ,  
Տեսնում ե միշտ ամեն մի մարդ:  
Յես եմ սիրուն գարնան գուշակ  
Իմ անունն ե մանուշակ:

### ՀԱՆՅՈՒԿ

Գլխարկը կապույտ,  
Շապիկը կանաչ,  
Մի սիրուն ծաղիկ,  
Ամենքիս ճանաչ:

## 47. ՄԱՅԻՍԻ 1-ԻՆ

Այս առավոտ արեն ավելի պայծառ եր:  
Նրա վոսկե ճառագայթները հեղեղել եյին սար ու  
ձպր, դաշտ ու անտառ:  
Գյուղը տանական տեսք եր ընդունել. կոլտնտես-  
ության գրասեյնակի, շրջկոմի, շրջգործկոմի, կոռուկու-  
ափի խանութների վրա, հրապարակում ծածանվում ելն  
կարմիր գրոշակները:

Զանազան փողոցներից լսվում եր զուռնի զիլ ձայնը:  
Ահա յերթն անցնում ե մեծ հրապարակով:  
Ամենից առաջ գնում են կոլտնտեսականները: Ստա-  
խանովական հոգին հասանը, բարձր բանած, տանում ե

կարմիր գրոշակը: Նրանց յետեկց գնում են կոմիերիտա-  
կանները, դպրոցականները, ֆիզկուլտուրնիկները:

Զվարթ քայլերով անցնում ե ընկեր Վորոշիլովի ան-  
վան պիտներական ջոկատը:

Ողում ոլանում են քաղաքից լեկած ողանավերը:  
— Կեցցե՛ Մայիսի 1-ը, կեցցե՛ բանվորների միջազգա-  
յին որը, — գոչում են յերթին մամնակցողները:

## 48. ՄԱՅԻՍԻ Ս

Ալ ու ալվան վառ մայիս,  
Դու ամենից լավ ամիս,  
Կյանք ու արև ես տալիս,  
Ի՞նչ սիրուն ես, ջան մայիս:

Հանդ ու ալգի զարդարուն,  
Հովս ե խաղում դաշտերում,  
Թոշուններն են քեզ գովում.  
Ի՞նչ նախշուն ես, լավ մայիս:

Դու կարտառ ես մանկան պետ,  
Թովուուն ու խնդերես,  
Շուտով, շուտով կրերես  
Վողջ աշխարհին Ալ-Մայիս:

## 49. ԱՐԱԿԻ Լ

Արագիր բարով յեկար,  
Հեր արագիր բարով յեկար,  
Դու մեզ գարնան նաևն բերիր,  
Մեր սրտերն ուրախ արիր:

## 50. ՄԵՂՈՒՆԵՐԸ

1

- Գարունը յեկավ։ Որը տաք եր, արկը վառ։  
 Մեղուները փեթակից դուրս յեկան, թռան խնձորենու  
 մոտ։
- Միթե խնձորենին մեղուներիս համար վոչինչ չունի։
  - Վհչ, մուղուները շուտ են դուրս յեկել. դեռ խըս-  
 ձորենու ծաղիկները թաղնված են բողբոշների մեջ։


2

- Մեղուները թռան դեպի բալինին։  
 — Միթե բալինին ծաղիկներ չունի մեղուների համար։  
 — Մի քանի որից հետո յեկեք, դեռ վհչ մի ծաղիկ  
 չի բացվեր։  
 Մեղուները թռան կակաչի մոտ։ Մտան նրա գունա-  
 վոր բաժակը, բայց այնտեղ ուտելիք չկար։

3

- Մեղուները սոված, տխուր ուզում ելին յետ դառնալ  
 փեթակը, յերք հանկարծ թփի տակ տեսան վոքրիկ, մուգ-  
 կապուլտ ծաղիկներ։

- Դրանք մասուշակներն ելին։  
 Մեղուները նրանց բաժակներից կուշտ կերան, խմե-  
 ցին և ուրախ-ուրախ վերադարձն վեթակը։



